

- *Դեկտեմբերին, շինարարության աճի թուլանալուն զուգահեռ, տնտեսական աճը նվազեց մինչև 12.9 տոկոս:*
- *Հունվարին գնաճի տեմպն ավելի դանդաղեց՝ մինչև 8.1 տոկոս՝ պայմանավորված սննդամթերքի ավելի ցածր գնաճով:*
- *Արտահանման և ներմուծման արտասովոր բարձր աճը պահպանվեց:*
- *2023 թ. սկզբին ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ կայուն պահպանվեց, սակայն ՌԴ ռուբլու նկատմամբ ուժեղացավ:*
- *Դեկտեմբերին բյուջեի պակասուրդը հասավ ՀՆԱ-ի 1.1 տոկոսին՝ աճողական կտրվածքով պակասուրդը հասցնելով 2022 թ. գնահատված ՀՆԱ-ի 2.1 տոկոսին:*
- *Դեկտեմբերին ֆինանսական ցուցանիշները հիմնականում բարելավվեցին:*

Տնտեսական ակտիվությունը դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ (ՆՏՆԺ), իրական արտահայտությամբ աճեց 12.9 տոկոսով: Այն համադրելի է հոկտեմբերի 17.5 և նոյեմբերի 13.8 տոկոս ցուցանիշների հետ: Աճի տեմպի դանդաղումը հիմնականում պայմանավորված էր շինարարության ճյուղում աճի արագության նվազմամբ, որը նոյեմբերի 11.3 տոկոսից (ՆՏՆԺ) դեկտեմբերին 7.3 տոկոս կազմեց (ՆՏՆԺ): Ծառայությունների բարձր աճը պահպանվեց, չնայած փոքր-ինչ նվազմանը (դեկտեմբերին 28 տոկոս՝ նոյեմբերի 31 տոկոսի համեմատ): Մյուս կողմից թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալն արագ տեմպով աճեց՝ նոյեմբերին 2.3 տոկոսով կրճատման համեմատ (ՆՏՆԺ), դեկտեմբերին աճելով 3.3 տոկոսով (զծապատկեր 1): Նշվածը պայմանավորված էր թե՛ հանքարդյունաբերության, թե՛ մշակող արդյունաբերության ենթաճյուղերի աճով, որոնք աճել են համապատասխանաբար 10 և 4 տոկոսով: Մշակող արդյունաբերության ամենաբարձր աճի ցուցանիշները գրանցվել են համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական ապրանքների (կրկնապատկվել են) և ոսկերչական արտադրանքի ոլորտում (եռապատկվել են): Ընդհանուր առմամբ տնտեսական ակտիվությունը

2022 թ. աճել է 14.2 տոկոսով, ընդ որում ամենաբարձր աճն արձանագրվել է ծառայությունների (աճը՝ 28 տոկոս), իսկ ամենացածրը՝ գյուղատնտեսության ոլորտում (աճը՝ 0.4 տոկոս):

Պահանջարկի կողմում դեկտեմբերին աճին ամենամեծ չափով նպաստել է մասնավոր սպառումը: Դրան օժանդակել են նախ՝ 13 տոկոսով իրական աշխատավարձերի աճը՝ պայմանավորված մասնավոր հատվածում աշխատավարձերի բարձրացմամբ (մասնավորապես ֆինանսների/ապահովագրության և ՏՏ ոլորտներում) և ապա՝ արտասահմանից դրամական փոխանցումների շարունակվող ներհոսքը, որոնք բառապատկվել են (ՆՏՆԺ) և աճել են 34 տոկոսով (նախորդ ամսվա համեմատ) (զծապատկեր 2):

Գործազրկության մակարդակը, թեև դեռևս բարձր է, 2022 թ. նշանակալիորեն նվազեց: Գործազրկության մակարդակը 2022 թ. երրորդ եռամսյակում կազմեց 11.6 տոկոս նվազելով նախորդ տարվա 15 տոկոսից, ինչն ինքնին բարելավում է 2020 թ. երրորդ եռամսյակի համեմատ (18.2 տոկոս):

Հունվարին գնաճը շարունակեց թուլանալ: Գնաճի (ՆՏՆԺ) տեմպը դանդաղեց դեկտեմբերի 8.3 տոկոսից հունվարին կազմելով 8.1 տոկոս, ինչը հիմնականում պայմանավորված էր սննդամթերքի գնաճի տեմպի նվազմամբ: Հունվարին բնականոն գնաճը, որը 9.1 տոկոս էր, բարձր էր գնաճի ընդհանուր մակարդակից: ՀՀ կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) իր խորհրդի հունվարի 31-ի նիստում վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ՝ 10.75 տոկոս թողեց (զծապատկեր 3):

Դեկտեմբերին արտահանումը ներմուծման նկատմամբ շարունակեց առաջանցիկ տեմպով աճել (համապատասխանաբար՝ 90 և 60 տոկոս): Բարձր աճը պայմանավորված էր դեպի Ռուսաստան վերաարտահանմամբ, մասնավորապես՝ մեքենաների, գործիքների, տրանսպորտային միջոցների և թանկարժեք քարերի: Գյուղատնտեսական և հանքահումքային արտադրանքի արտահանումը դեկտեմբերին շարունակեց նվազել՝ համապատասխանաբար 24 և 7 տոկոսով (ՆՏՆԺ): Հանքահումքային արտադրանքի դեպքում պղնձի արտահանումն արժեքային արտահայտությամբ նվազեց 8 տոկոսով՝

պայմանավորված միջազգային ավելի ցածր գներով (չնայած ծավալի 1 տոկոսանոց աճին): 2022 թ. ապրանքների արտահանումն ու ներմուծումը համապատասխանաբար աշխուժացան 77 և 64 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝ հանգեցնելով առևտրային հաշվեկշռի պակասուրդի 45 տոկոսով վատթարացման: Ապրանքների առևտրային պակասուրդը փոխհատուցվեց ծառայությունների հաշվեկշռի բարելավմամբ՝ հիմնականում 2022 թվականին զբոսաշրջիկների թվի 90 տոկոսանոց աճի և զուտ դրամական փոխանցումների եռապատկման շնորհիվ, որն ապահովվել է Ռուսաստանից զուտ ներհոսքերի վեցապատիկ աճի հաշվին:

2023 հունվարից սկսած, փետրվարի կեսի դրությամբ, ՀՀ դրամը կայուն է պահպանվել ԱՄՆ դոլարի և 4 տոկոսով ուժեղացել է ՌԴ ռուբլու նկատմամբ: ՀՀ դրամը ԱՄՆ դոլարից 20 տոկոսով ուժեղ էր, քան դեկտեմբերին (ՆՏՆԺՀ) (գծապատկեր 4): 2023 թ. հունվարի վերջին միջազգային պահուստները դեկտեմբերի վերջի բարձրակետից իջել էին 420 միլիոն ԱՄՆ դոլարով՝ ապահովելով ներմուծման 4.4 ամսվա ծածկույթ (գծապատկեր 5):


Չնայած դեկտեմբերին զգալի աճին, բյուջեի պակասուրդը 2022 թվականին փոքրացավ՝ տարին ավարտելով գնահատվող ՀՆԱ-ի 2.1 տոկոսով, համեմատած 2021 թ. 4.6 տոկոս պակասուրդի հետ: 2022 թ. դեկտեմբերին բյուջեի պակասուրդն ընդլայնվեց՝ կազմելով 93 միլիարդ ՀՀ դրամ (գնահատված ՀՆԱ-ի 1.1 տոկոսը), պայմանավորված նոյեմբերի համեմատ 57 տոկոսով ընթացիկ ծախսերի ավելացմամբ: Թեև նոյեմբերի համեմատ փոքր-ինչ ցածր, դեկտեմբերին կապիտալ ծախսերը կազմեցին 2022 թ. գնահատված ՀՆԱ-ի 1 տոկոսը: Հարկային եկամուտներն անվանական արտահայտությամբ աճեցին 19 տոկոսով (ՆՏՆԺՀ), ընդ որում աճի կեսից ավելին ԱԱՀ-ն է նպաստել: Դրան հաջորդել է եկամտային հարկը՝ աճելով 27 տոկոսով: Մաքսային մուտքերը կրճատվել են 30 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝ հաշվի առնելով հանքահումքային արտադրանքի արտահանման ժամանակավոր մաքսատուրքի ժամկետի ավարտը:

2022 թ. ավարտվել է ֆինանսական հատվածի ցուցանիշների առողջ դիրքով, իսկ վարկավորման տեմպը դեկտեմբերին դանդաղել է: Չաշխատող վարկերի (NPL) հարաբերակցությունն ընդհանուր

համախառն վարկերին երկրորդ ամիսն անընդմեջ նվազել է՝ նոյեմբերի 3.2 տոկոսից դեկտեմբերին կազմելով 2.8 տոկոս: Բացի այդ, կապիտալի համարժեքության գործակիցը (CAR), կազմելով 20.3 տոկոս, 2017 թ. փետրվարից առաջին անգամ փոքր-ինչ գերազանցել է 20 տոկոսի նշագիծը: Իրացվելի ակտիվների հարաբերակցությունն ընդհանուր ակտիվներին և ըստ ակտիվների շահութաբերությունը փոքր հետընթաց են գրանցել 2022 թ. վերջին կազմելով համապատասխանաբար 37.0 և 4.1 տոկոս: Արտարժույթով ճշգրտված վարկավորումը նվազել է՝ դեկտեմբերին կազմելով 0.7 տոկոս (նախորդ ամսվա համեմատ), միջին տարեկան ցուցանիշին համահունչ:

Գծապատկեր 1. Դեկտեմբերին բոլոր ճյուղերն աճեցին. առաջատարը ծառայություններն էին


(Տնտեսական ակտիվության ցուցանիշ, ՆՏԺՀ փոփոխությունը, %)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Դրամական փոխանցումների հոսքերը, նոյեմբերին դադարեցրեցին աշխուժացան


(հազար ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Գնաճի տեմպն ավելի դանդաղեց ՀՀ ԿԲ թիրախից բարձր պահպանվելով


(ՄԳԻ գնաճ, ՆՏԺՀ փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. ՀՀ դրամը 2023 թ. սկզբից սկսած հարաբերականորեն կայուն է եղել


(Ինդեքս՝ 2 մարտի, 2020 = 100)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 5. Հունվարին միջազգային պահուստները նվազեցին 2022 թ. դեկտեմբերի բարձրակետից


(Միլիոն ԱՄՆ դոլար) (Ներմուծման ամիսներ)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. 2022 թ. բյուջեի պակասուրդը 2021 թ. պակասուրդի կեսն էր

(Միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ